ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Թեև հայ պատմագրությունը մեր մատենագրության արշալույսին արդեն բարձր մակարդակի վրա էր գտնվում, այսուհանդերձ դեռ մի քանի դար թվականությամբ ժամանակագրություն չունեցավ։ Առաջին հայ պատմիչները (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Եղիշե, Ղազար Փարպեցի) դեպքերի ժամանակագրությունը կապում էին այս կամ այն հայ թե օտար տիրակալի իշխանության տարիների հետ («Ի թագաւորութեանն Տրդատայ որդւոյն Խոսրովու...»[1]) և կամ որևէ հիշատակելի դեպքի հետ («Ապա ամս ութ յետ գնալոյն փախչելոյն արքային Հայոց Արշակայ ի թագաւորին Պարսից Շապուհ...»[2])։ Վերոհիշյալ պատմիչների մոտ չկա ժամանակագրություն, թեկուզ առանց թվականության։

Առաջին անգամ պատմական ժամանակագրություն գտնում ենք Սովսես Խորենացու և Սեբեոսի (Անանունի) մոտ, որտեղ տրված են թե՛ հայ, թե՛ օտար ամեն մի թագավորի իշխանության տարիներն ըստ հաջորդականության և հնարավոր է այդ տվյալներով կազմել ամբողջական շարքեր։ Սակայն այստեղ ևս դեռ չկա թվականի օգտագործում, մինչդեռ այդ ժամանակ արդեն վաղուց (V դարի առաջին կեսում) հայերեն էր թարգմանված Եվսեբիոս Պամփիլոս Կեսարացու (263—340) «Ժամանակականը» (Քրոնիկոն) աշխատությունը[3], որտեղ կա ժամանակագրություն Հռոմի հիմնադրման, հունական օլիմպիադայի թվականներով։ Այդ ժամանակ Հայաստանում հայտնի էր նաև սելևկյան թվականը[4]։

Հայ պատմիչները թվականության կիրառումով պատմություն սկսեցին շարադրել միայն VI դարում հայկական թվականի (Հայոց մեծ թուականի) ընդունումից հետո։ Սակայն դրանից միայն մի քանի դար անց սկսվեց թվականի կանոնավոր օգտագործումը։

Հայոց մեծ թվականի սկզբնավորումից հետո ապրած առաջին հայ պատմիչը՝ Սեբեոսը չի օգտագործում հայկական թվականը և ոչ էլ որևէ այլ թվական, ըստ երևույթին այն պատճառով, որ դեռ անշարժ տոմար պետք էր մշակել։ Սեբեոսը դեպքերի նկարագրությունը տալիս է սոսկ տիրակալների տարիներով. «Եւ եղեւ ի քսաներորդի ամի Յազկերտի արքայի Պարսից և մեռաւ ամի Կոստասի կայսեր...»[5]։ Նույն ձևը օգտագործվում էր նաև վիմագիր

---

1 «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1933, գլխ. Գ, գլ. Բ, էջ 18։

2 Փաւստոս, գլխ. Դ, գլ. ԻԱ, էջ 144։

3 «Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանակականք երկմասնեայս», մասն Ա, Ժամանակագրութիւն պատմական, մասն Բ, Քրոնիկոն կանոն, Վենետիկ, 1818։

4 Ըստ Գ. Սարգսյանի Մովսես Խորենացու ժամանակագրության մեջ ժամանակի հաշիվը համընկնում է սելևկյան տոմարի (մ. թ. ա. 311) հետ։ Տե՛ս Գ. Սարգսյան, Մովսես Խորենացու Հայոց Պատմության ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 15։

5 «Սեբեոսի Եպիսկոպոսի Պատմութիւն», ի ձեռն Ս. Մալխասեանց, Երևան, 1939, էջ 139։

արձանագրություններում։ Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի (661—685) Ակռուռի տաճարի կառուցման մասին արձանագրության մեջ ասվում է. «Ի և Թ ամի Կոստանտնի մարերի ամսոյ որ աւր Ժ և Ե հիմնարկեցաւ...»[6]։

Առաջին հայ պատմիչը, որ հայկական թվականն է օգտագործում, Անանիա Շիրակացին է, որին և Անաստաս կաթողիկոսը հանձնարարել էր մշակել անշարժ տոմար։ Խոսելով խազարների արշավանքի մասին, նա գրում է. «Եւ ապանին ի պատերազմի զիշխանս Հայոց, Վրաց և Աղուանից յամսեանն սահմի, որ աւր տասն էր ամսոյն ի ՃԼԴ թուականին Հայոց»[7] (16 օգոստոսի 685)[8]։

Անանիա Շիրակացին, հենվելով Եվսեբիոս Կեսարացու աշխատության վրա, շարադրում է տիեզերական պատմությունը։ Նրա ժամանակագրական հաշիվները սկսում են աշխարհի արարչագործությունից մինչև մեր թվականության (փրկչական թվականի) սկիզբը, ապա հասնում 685 թ., սակայն առանց թվականների։ Նա շարադրում է հին հրեաների, պարսից թագավորների և Հռոմի ու Բյուզանդիայի կայսրերի ժամանակագրությունը, հիշելով ամեն մի տիրակալի իշխանության տարիները։ Իր ժամանակագրության մեջ Անանիա Շիրակացին այնքան է օգտվել Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնից, որ երբեմն տառացի ընդօրինակել է[9]։

Ն. Ադոնցը[10] նշում է հայկական թվականի օգտագործման մի դեպք Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ։ Բ հատորի (գրված VII դարի վերջին կամ VIII դարի սկզբին) Թ գլխի վերջում հեղինակը ընդգծում է, որ պատմելու է գալիք տագնապի մասին սկսած «յառաջին ութեւտասն նահանջէն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մեհեկի ամսոյն՝ յերեսուն եւ հինգ ամէն Խոսրովու Որմզդեան արքայից արքայի»[11]։ Այստեղ Խոսրովի 35-րդ տարին է 590+35=625։ Իսկ վերոհիշյալ 18 նահանջը չորսով բազմապատկելով ստանում ենք 72 (հայկական թվականը), որին եթե գումարենք 553 (ըստ Ն. Ադոնցի) կստացվի 625[12]։

Հաջորդ սկզբնաղբյուրը, որտեղ օգտագործված է հայկական թվականը, Հովհան կաթողիկոսի Օձնեցու «Սակս ժողովոց» գրվածքն է, ուր հիշված է, թե Մանազկերտի ժողովը տեղի է ունեցել ՃՀԵ (726) թ.[13]։ Հայկական թվականը օգտագործված է նաև Ղևոնդ պատմագրի մոտ, որը, խոսելով Արծրունի Սահակ և Համազասպ եղբայրների արաբ ոստիկան Խուզայմայի կողմից նահատակելու մասին, գրում է. «Գործեցաւ այս յիշխանութեանն Մուսէի յազգապետութեանն Խազմայ, յաւուրս սուրբ յայտնութեանն Տեառն յորում էր թուականս Հայոց մլգ»[14]։ Նույն այդ տարիներին է պատկանում նաև մեզ

6 Н. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, էջ 402։ П. Мурадян, Хронология систем летосчисления по армянским источникам, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1976, № 1, էջ 49—64։

7 Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 399։

8 Հ. Ս. Բագալյան, Օրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 325։

9 Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 170։

10 Ն. Ադոնց, Քննություն Մովսես Կաղանկատվացու, «Անահիտ», հունիս—դեկտեմբեր, Փարիզ, 1939, էջ 23—25։

11 «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», 1913, էջ 145։

12 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 23—25։

13 «Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի սակս ժողովոց որ եղեն ի Հայք. «Գիրք թղթոց», մատենագրութիւն նախնեաց», Տփղիս, 1901, էջ 223։

14 «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Պետերբուրգ, 1887, էջ 165։

հասած հայկական հնագույն թվակիր արձանագրությունը (Ուխտատուր վանականի) Թալինի եկեղեցու վրա. «ՄԼԲ թուականութեան Հայոց»[15] (783 թ.)։

Այսպես, հարյուր տարուց ավելի չօգտագործվելուց հետո հայկական թվականությունը VII դարի վերջում և VIII դարում սկսեց կիրառվել պատմական աղբյուրներում։ Պատմիչ կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին, խոսելով հայկական տոմարը անշարժ գարձնելու համար Անաստաս կաթողիկոսի (661—667) գործադրած ջանքերի մասին, նշում է, որ նա այդ բանը հանձնարարեց Անանիա Անեցուն (Շիրակացուն), նպատակ ունենալով «ըստ բոլոր սզգաց պայմանի՝ անշուշտ յօրինեալ զկարգ հայկականս տօմարի, զի բարեձևագունից ոմանց և զմեր կշռադատեալ՝ մի կարօտասցուք գալ ի զուգաւորութիւն Հռովմայեցւոց»[16]։

Այլ ազգերի տոմարից կառչած չլինելու հարցը շատ հրատապ էր իր ժամանակի համար, սակայն պետք է նշել, որ բացի Հռոմայեցոց տոմարից զգուշանալուց, հենց նույն Անաստաս կաթողիկոսի ժամանակ անհրաժեշտ էր նախ խուսափել մի այլ տոմարից։ Դա մահմեդական թվականությունն էր, այսինքն հիջրին։

Սեբեոսը երկու դեպքում անորոշ ձևով ունի «ամս իսմայելացւոց տէրութեանն» արտահայտությունը։ Հիշելով արաբների և պարսիկների կռվի մասին, որտեղ վերջիններս պարտվեցին, նա նշում է, որ դա տեղի ունեցավ «յամին ԺԹ-երորդի իսմայելացւոց տէրութեանն»[17]։ Սակայն Սեբեոսը շարունակության մեջ նշում է, որ այդ տարում կործանվեց Սասանյանների տերությունը, ուստի պարզ է, որ դա 652 թ. է, մանավանդ որ նա ասել էր, թե դա տեղի ունեցավ Կոստանդ կայսեր (641—668) տասնմեկերորդ տարում։ Ապա խոսելով Կոստանդ կայսեր 653 թ. Հայաստանի վրա հարձակվելու մասին, ավելացնում է. «Յամի ԺԲ-երորդի թագաւորութեանն իւրում ի քսան ամի իսմայելացւոց տէրութեանն»[18]։ Հավանաբար այստեղ Սեբեոսը նկատի ունի ոչ թե բուն հիջրի (622), այլ առաջին խալիֆայի իշխանության գլուխ անցնելու թվականը (632)։

Հիջրի թվականը օգտագործված ենք գտնում Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ։ Բ հատորի ԼԹ գլխի սկզբում հիշվում է, թե «ի վաթսներորդ երկրորդ ամի հարաւայնոյ իշխանութեան դուռոյին Մահմատայ»[19] Հայոց արևելից կողմանց իշխան Վարազ Տրդատը Հայոց իշխան Դրիգոր Մամիկոնյանի համաձայնությամբ Իսրայել եպիսկոպոսին ուղարկեց Հոների մոտ։ Ինչպես հայտնի է, այս առաքելությունը եղավ 682 թ.[20]։ Իսկ հիջրի 62 թ. (681—682) համընկնում է դրան։ Անորոշ ձևով հիջրի թվականն օգտագործված է նաև Ղևոնդի մոտ, որն արաբների արշավանքներից մեկը թվագրում է «ի քսան և վեցերորդ ամի նոցին իշխանութեանն»[21], այսինքն՝ 646—647 թ.։

---

15 Գարեգին վարդապետ, Քարտեզ հայ հնագրութեան, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 176։

16 «Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի», Երուսաղեմ, 1867, էջ 118։

17 Սեբեոս, էջ 139—140։

18 Սեբեոս, էջ 141։ Նույնը կրկնվում է Անանունի բաժնում (Դ գլխի վերջում). «Յերկոտասան ամի Կոստանդի և ի Ի-երորդ ամի իսմայելացւոց տէրութեանն»։

19 Մովսես Կաղանկատվացի, էջ 269։

20 Л. Н. Тер-Гевондян, Армения и арабский халифат, Ереван, 1977, էջ 50։

21 Ղևոնդ, էջ 8։

Նման իրադրությունը չէր կարող չմտահոգել հայ եկեղեցուն և ժամանակի մտածողներին, որոնք անհանգստացած էին ամեն մի օտար տոմարի ներթափանցման վտանգով, լինի դա «հռովմայեցւոց», թե «իսմայելացւոց»։

Սակայն VIII դարում[22] հայկական թվականը շրջանառության մեջ մտնելուց հետո գարմանալի կերպով դեռ երկու դար չդարձավ հայկական պատմական երկերի ժամանակագրության հիմքը։ IX դարի վերջերի և X դարի սկզբի մեծանուն պատմիչներ Թովմա Արծրունին (մասամբ) և մանավանդ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին իրենց պատմական աշխատությունները չեն կառուցում թվական ժամանակագրության վրա։

Թովմա Արծրունին քաջ ծանոթ է Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնին, ինչպես նաև տարբեր թվականների։ Նա մի քանի անգամ[23] հիշում է յոբելեանք[24], ոլիմպիատք[25] և ընդիքտիոնք[26] թվականները։ Խոսելով նոր նշանակված Յուսուֆ ոստիկանի մասին (851) հիշում է նրա թվականը. «Արդ ի գալ միւսոյ ամին որ յոբելեանք ղ և օլիմպիատք հբ, ընդիքտիոնք ի, որ է ըստ հայերէն թուականութեանն յ», այսինքն հայկական 300 (851) թ.։ Գերված հայ նախարարների Միջագետքից վերադարձի մասին պատմելիս նա նշում է. «Եւ եղև ի լնուլ վեցերորդ ամի գերութեանն հայոց որ է յղ ամ ըստ թուոյ հայերէն տումարին և ունի յոբելեանք զ և ոլիմպիադք և ընդիքտիոնք»։ Սա համապատասխանում է հայկական 306 (857) թ.։

Համենայն դեպս Թովմա Արծրունին որոշ չափով գործածում է թվականը ժամանակագրության մեջ, երբ հիշում է իրեն ժամանակակից դեպքերը (IX դարի երկրորդ կես), այսինքն յ (300=851) թվականից մինչև յծա (351=902)։ Օրինակ յ (851) թ. Յուսուֆը եկավ Հայաստան, յբ (302=853) թ. Ատոմյանները նահատակվեցին, յղ (306=857) թ. գերի տարված նախարարները վերադարձան, յէ (307=858) թ. Աշոտ Արծրունին դարձավ գերությունից, յիգ (323=874) թ. մեռավ Աշոտ Արծրունին, յլթ (339=890) թ. մեռավ Հայոց Աշոտ Ա Բագրատունի թագավորը, յխէ (347=898) թ. Աֆշինի զորքը կործանվեց, յծա (351=902)[27] թ. Հայոց Սմբատ Բ Բագրատունի թագավորը հաղթանակ տարավ ապստամբների դեմ և այլն։ Ըստ էության հայ պատմագրության մեջ սա առաջին փորձն էր հայկական թվականներով (և ընդհանրապես որևէ թվականով) շարադրելու թեկուզ շատ կարճ ժամանակաշրջանի (կես դար) և հիմնականում մեկ նահանգի (Վասպուրականի) պատմությունը։

---

22 Հետաքրքրական է նշել, որ այդ ժամանակ թվականությամբ ժամանակագրությունը արդեն արմատանում է արևելյան բոլոր երկրներում։ VIII դարի երկրորդ կեսին գրված Կեղծ Դիոնիսիոս Տելլ Մահրացու ասորերեն ժամանակագրությունը հենվում է սելևկյան թվականության վրա, իսկ IX դարի սկզբին բյուզանդացի նշանավոր պատմիչ Թեոփանեսն (752—818) իր ժամանակագրությունը հյուսել է աշխարհի արարչագործության թվականի հիման վրա (V. Grümel, Traité d'études byzantines, I, La chronologie, Paris, 1958).

23 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», ՍՊբ. 1887, էջ 106, 115, 201։

24 Յոբելեանքը հավասար է 50 տարվա շրջանի (Ա. Արրամյան. Տարեթվերի և ամսաթվերի գործածությունը հայ մատենագրության մեջ, Էջմիածին, 1956, Գ, էջ 18)։

25 Ոլիմպիատքը հավասար է չորս տարվա շրջանի (տե՛ս նույն տեղում)։

26 Ընդիրտիոնք թվականը սկսում է 313 թվից և 15 տարվա մի շրջան է (նույն տեղում, էջ 18)։

27 Թովմա Արծրունի, էջ 115, 201, 172, 269, 217, 230, 243, 247։

Հայ միջնադարյան պատմագրության հանելուկներից է պատմիչ կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու անտարբերությունը թվականության գործածման նկատմամբ[28]։

Այդքան բարձր զարգացման տեր և բազմահմուտ պատմիչը բոլորովին չի ձգտում իր նկարագրած դեպքերը շարադրել թվականով ժամանակագրությամբ (թեկուզ Թովմայի նման տալով միայն իր ժամանակի դեպքերի թվականները)։ Նա, որ, ինչպես վերևում տեսանք, հայկական տոմարի օգտագործումը բացատրում է հռոմայեցոց տոմարից կառչած չլինելու անհրաժեշտությամբ, ինքը հայկական թվականը ի միջի այլոց և օգտագործում։ Օրինակ, Ատոմյան վկաների նահատակության թվականը դնում է «յերեք հարիւրորդի երկրորդի թուականութեանս Թորգոմայ»[29], այսինքն 853 թ.։ Ի միջի այլոց օգտագործված են նաև հռոմեական և նույնիսկ հիջրի թվականները։ Բուղայի կողմից դերեվարված և հավատափոխ չլինելու պատճառով մահվան դատապարտված հայ նախարարների նահատակությունը դնում է «ի որ թուականին հռոմոց»[30], այսինքն 855 թ.։ VIII դարի սկզբին Նախճավանում և Խրամում արաբ իշխանավորների կատարած գաղանաբարո արարքների մասին գրում է. «Յետ ութսուն և հինգ թուականին իւրեանց»[31], այսինքն 704 թ.։ Այստեղ խոսքը հստակ կերպով հիջրի թվականի մասին է, քանի որ ասվում է «նրանց թվականին»։ Ինչպես տեսնում ենք, թվականների պատահական օգտագործումից այն կողմ չի անցնում Դրասխանակերտցին։

Հայ պատմագրության մեջ առաջինը, որ թվականով ժամանակագրությամբ շարադրեց իր պատմությունը, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն է։

Նա մեր թվականությունից առաջ ընկած ժամանակաշրջանի համար գործածում է ընդհանրապես Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի[32] տվյալները։ Մեր թվականության սկզբից մինչև Հայոց մեծ թվականի ընդունումը (նույնիսկ մինչև VII դարի սկիզբը), Ասողիկը դեռ չի տալիս թվակիր ժամանակագրություն, քանի որ այդ հարցում նրա հիմքը հայկական թվականությունն է։ Միայն հիշում է. «Ի ծննդենէ Փրկչին մինչև ցժողովն Դունայ և զթուականն Հայոց ամք շծգ», այսինքն 553։ Ապա «ի լուսաւորութենէ սրբոյն Գրիգորի ամք մծբ» (252), քրիստոնեության ընդունումը համարելով 301 թ.[33]։

Ստեփանոս Ասողիկը հայկական թվականությունն սկսում է օգտագործել միայն VII դարի դեպքերի համար և ապա տալիս է մոտավորապես չորս հարյուր տարվա թվակիր ժամանակագրությունը։

---

28 Հայ պատմագրության մեջ թվականությամբ ժամանակագրության օգտագործման ուշացումը առավել ևս տարօրինակ է թվում, երբ նկատի ենք առնում, որ արաբ պատմագրության մեջ, որը հայկականից ուշ է զարգացել, հենց VII—IX դդ. արդեն խիստ կերպով օգտագործվում էր ճշգրիտ թվականությունը (հիջրի), նշելով ամեն մի դեպքի ոչ միայն տարին, այլև ամիսն ու օրը։

29 Հովհաննես կաթողիկոս, էջ 158։

30 Նույն տեղում, էջ 166։

31 Նույն տեղում, էջ 124։

32 Պետք է նշել, որ վոքր տարբերություն կա Եվսեբիոսի ժամանակագրության և Ասողիկի տված համակարգի միջև։ Ասողիկը իր մատյանի գրության թվականը (1004) այսպես է հիշում. «Ադամայ մինչև առ մեզ լինել ամք ցմձբ» (6282), այսպիսով. Ադամից մինչև մեր թվականության սկիզբը ստացվում է 5278, մինչդեռ նույն շրջանը Եվսեբիոսի մոտ (և ամբողջ հայ մատենագրության մեջ) 5198 տարի է։ «Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 18, 285, ծան. 26 (էջ 305)։

33 Ասողիկ. Հանդես Բ, գլ. Բ, էջ 83։

Հայոց իշխանների ու թագավորների թվականներով նա տալիս է իր ժամանակագրության հիմքը։ Այսպես, օրինակ.

ճդ* (655) Համազասպ Մամիկոնյանը դարձավ իշխան հայոց (էջ 99)

ճլդ (685) մեռավ հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը (էջ 100)

ճլե (686) Աշոտ Բագրատունին դարձավ իշխան հայոց (էջ 100)

ճխ (691) հայոց իշխան դարձավ Սմբատ Բագրատունին 20 տարով, հետո հաջորդում է Աշոտ Բագրատունին 15 տարով, ապա Սմբատը՝ 22 տարով և Աշոտ Մսակերը՝ 20 տարով (էջ 101)

մհե (826) Սմբատ Աբլաբասը վերադարձավ աբբասյան արքունիքից (էջ 106)

յժա (862) Աշոտ Բագրատունի՝ իշխանաց իշխան (էջ 110)

յլզ (887) Աշոտ Ա Բագրատունի՝ թագավոր հայոց (էջ 110)

յխ (891) Սմբատ Ա թագավոր հայոց. թագավորեց 24 տարի (էջ 159)

յհը (929) վախճանվեց Աշոտ Բ Երկաթ թագավորը, հաջորդեց Աբասը 24 տարի (էջ 170)

նբ (953) վախճանվեց Աբաս թագավորը, հաջորդեց Աշոտ Գ Ողորմածը (էջ 180)

նիգ (977) վախճանվեց Աշոտ Գ, հաջորդեց Սմբատը 13 տարի (էջ 187)

նլը (989/990) վախճանվեց Սմբատ Բ թագավորը, հաջորդեց Գագիկ Ա թագավորը (էջ 255)

Զատիկանց կարևոր է քաղաքական անցքերի թվարկումը, թե՛ Հայաստանում, թե՛ երկրից դուրս.

կը (619) երևան եկավ Մահմեդը (էջ 118)

հբ (623) Իսմայելի (արաբների) թագավորության սկիզբը (էջ 86)

հէ (628) Հերակլը գրավեց Երուսաղեմը (էջ 142)

ձգ (637) արաբների առաջին արշավանքը Հայաստան (էջ 98)

ղե (645) Դվինի գրավումը արաբների կողմից (էջ 98)

ճլդ (685) խազարների հարձակումը (էջ 100)

ճծգ (704) Նախճավանում և Խրամում նախարարների հրկիզումը (էջ 125)

ճձզ (737) Վահան Գողթնացու նահատակությունը (էջ 125)

մդ (755) Կոստանդին կայսրը գրավեց Կարնո քաղաքը և քանդեց պարիսպը (էջ 142)

մե (756) Արմինիայի ոստիկան Եզիդը վերաշինեց այն (էջ 143)

մհը (829) Միքայել կայսեր մահը (էջ 144)

յ (851) ոստիկան Աբու Սաիդը եկավ Հայաստան (էջ 107)

ւբ (853) Ատոմյան վկաների նահատակությունը (էջ 109)

յկե (916) Ռոմանոս կայսեր գահակալությունը (էջ 170)

յձգ (934) հույները գրավեցին Մելիտինեն (էջ 179)

յղը (949) Հովհան Զմշկիկը գրավեց Կարնո քաղաքը (էջ 179)

նժբ (963) կայսր դարձավ Նիկեփորը (էջ 183)

նժե (966) հույները գրավեցին Տարոնը (էջ 183)

նժէ (968) հույները պաշարեցին Մանազկերտը (էջ 183)

նիե (976) կայսր դարձավ Վասիլը (էջ 187)

նլգ (987) Աբլհաճը հարձակվեց Դվինի վրա (էջ 198)

---

* Ասողիկի բնագրում բոլոր հայկական թվականները տրված են փոքրատառերով։

Նխդ (997) Դավիթ կուրապաղատը պաշարեց Խլաթը (էջ 268)
Նխէ (998) Հայոց զորքի հաղթանակը Ռավվադյանների դեմ (էջ 269)
Նծ (1001) Հայոց Գագիկ Ա թագավորի պատժիչ արշավանքը Դավիթ Անհողինի դեմ (էջ 280)։

Իհարկե Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի հիշված թվականները առնված են տարբեր աղբյուրներից, VII—IX դդ. վերաբերող թվականները հավանաբար հաշվումներով է ստացել կամ էլ օգտագործել է մեզ անհայտ սկզբնաղբյուրներ։ Ինչ վերաբերում է X դարի դեպքերի ժամանակագրությանը, ապա դա, բնականաբար, իր սեփական դիտողությունների կամ ուրիշներից իմանալու միջոցով է կազմված։

Իր աղբյուրների մասին Ասողիկը խոսում է աշխատության առաջին էջերում։ Նախ և առաջ հիշում է Եվսեբիոս Կեսարացուն, ապա Սոկրատեսին և հայ պատմիչներին՝ Ագաթանգեղոս, Փավստոս, Եղիշե, Ղազար Փարպեցի, Մովսես քերթողահայր, Սեբեոս, Ղևոնդ, Շապուհ Բագրատունի, Հովհաննես կաթողիկոս[34]։ Սակայն կան տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ նա ունեցել է նաև այլ (օտար) աղբյուրներ։

Ղևոնդ պատմագրի[35] մոտ կա արաբ խալիֆաների իշխանության տարիների թվարկում, որը գրեթե նույնությամբ կրկնում է Թովմա Արծրունին[36], իսկ Ասողիկը նույնը տալիս է փոքր փոփոխություններով[37]։ Փակագծերի մեջ տալիս ենք Ասողիկի հիշած թվերը։

Մահմետ	2	
Աբու Բաքր, Ամր, Օթման	38	
Մուաւիա	19	տարի 4 ամիս (19)
Եզիտ	2	տարի 5 ամիս (2)
Աբդլ-մելիք	21	(21)
Վլիթ	10	տարի 8 ամիս (10)
Սուլեյման	2	տարի 8 ամիս (3)
Օմար	2	տարի 5 ամիս
Եզիտ	6	(6)
Հեշմ	19	տարի (12)[38]
Վլիթ	1	և կես տարի
Մրուան	6	
Աբդլա	3	(3)
միւս Աբդլա	22	(2)
Մահմետ Մահադի	8	
Մուսէ	1	(1)

Սակայն հենց հաջորդ (Ե) գլխում Ասողիկն ունի նաև մի այլ ցուցակ հետևյալ վերնագրի տակ. «Յայլմէ պատմագրի Յաղաղս Ամիր ալ-Մումնեացն Տաճկաց»[39]։

34 Նույն տեղում, էջ 6—7։

35 Ղևոնդ, էջ 3, 12, 14, 31, 40, 42, 99, 100, 115, 116, 129, 154, 161։

36 Թովմա Արծրունի, էջ 105։

37 Ասողիկ, հանդես Բ, գլ. Դ, էջ 116—135։

38 Գուցե գրչական սխալի հետևանքով ԺԹ (19) դարձել է ԺԲ (12)։

39 Ասողիկ, հանդես Բ, գլ. Ե, էջ 135։ Հայտնի չէ, թե հայ պատմագրությունը որևէ արաբական պատմական աղբյուր կամ թեկուզ հակիրճ ժամանակագրություն թարգմանել է

Մահմետ մարդարէ Տաճկաց, պետացեալ ամս Բ
Աբուբաքր ամս կ[40]
Ոմառ ամս ժա
Աւթման իպն Ափան ամս ժ
Մովիա ծեր ամս իգ
Իզիտ ամս զ
Մաւիա իպն Յիզիտն ամ ա
Մրուան ամ ա
Աբդլմելք Իպն Մրուան ամս ի
Վլիթ իպն Աբդլմելք ամս Թ մինչև ի ՃԿԳ (714) թուականին հայոց
Իսկ զկնի Վլթի եկաց ամիր ալ-Մումնի ի ՃՂԲ (743) թուականին Մրուան
Աբդլայ մեռաւ ի մժբ (770) թուականին
(Աբդլայ միւս Իպն որ ի Հոռոմս եմուտ)[41]
Մահդիի ամիր ալ-Մումնի եղև
Ահարոն մեռաւ ի ՃԽԵ (706)[42]
Ահարոն, որոյ եղբայր Ջափռ ի մղբ (849) թուականին մեռաւ
Ջափռ ի յժա (862) թուականին
Ահմատ, որ զԱլի որդի Յահէի Հայոց ամիրայ առաքեաց և զԱշոտ իշխանաց իշխան արար ի յժա (862) թուականին

Ապա Ասողիկը բացատրում է, որ ինքը կամեցել է հակիրճ գրել այս բոլորի մասին, բայց այլևայլ պատմությունների մեջ իրարից տարբեր անուններ և ժամանակներ է գտել, ուստի որոշել է բոլորը գրի առնել, որպեսզի ոչ մի պակաս չլինի իր տվյալների մեջ։

«Թէև շատ ինչ աշխատեցաք ի պատմագրական տառս առաջնոցն՝ գրել կարճ ի կարճոյ զզրոյցս անցելոցս (և ստուգիւ են ասացեալքն), սակայն զանուանս և զժամանակս ամիր ալ-մումնեացն զոմանց այլ և այլս գտաք ի պատմութիւնսն. ոչ գիտեմ, թէ երկանուն նոքա եղեալք, թէ մի ընդ միով երևեալ ահաւորք և շքեղք իբրև զինքնակալս երևեցան, զորոց զանուանսն յիշատակ գրոյ առին. սակայն մեք զբոլորն ի գրի աստ գրեցաք, զի մի թերութիւն բանի երևեսցի աստ»։

(Թեև մենք շատ աշխատեցինք հների պատմագրական մատյանների վրա, որպեսզի այնտեղից համառոտ դուրս բերենք անցյալի զրույցները և պատմիչների ստույգ խոսքերը, սակայն ամիր ալ-մումնիների ոմանց անունները և ժամանակները գտանք այլևայլ ձևերով։ Չգիտեմ, գուցե նրանք երկանուն էին կամ թե իրար կողքի երևալով[43] իրենց ահավոր և շքեղ տեսքով նրանք

թե ոչ։ Ն. Ակինյանը կարծում է, որ Մովսես Կաղանկատվացու (ըստ նրա՝ Դասխուրանցու) «Պատմութիւն Դ հատորի Ա և Բ գլուխները թարգմանված են ինչ-որ արաբերեն գրվածքից։ Սակայն դեռ չի պարզաբանված հայ և արաբ պատմագրական առնչությունների հարցը (Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի (կոչված Կաղանկատվացի) և իր «Պատմութիւն Աղուանից», Վիեննա, 1970, էջ 336—341)։

40 Աբու Բաքրը միայն երկու տարի է իշխել, իսկ 60 տարին պարզապես թյուրիմացություն է։

41 Այս տողը բնագրում երկու Ահարոնների միջև է գրված, մենք բերել ենք իր իսկական տեղը։

42 Գուցե մեծ եղած լինի (806), որն ավելի մոտ է իրականության (809 թ.)։

43 Այսինքն՝ իրար ձեռքից իշխանությունը խլելով։

[բոլորը] թվացել են անկախ տիրակալներ և նրանց անունները պատմության մեջ հիշատակվել են գրով։ Սակայն մենք ամեն ինչ այստեղ դրի առանք, որպեսզի ոչ մի թերություն չլինի)[44]։

Ասողիկը չի ասում, թե ով է «այլ պատմագիրը», որի էությունը միշտ անորոշ է համարվել նրա բնագրի բոլոր հրատարակիչների կողմից։ Հավանաբար այդ պատմիչը պետք է օտար լինի, քանի որ, ինչպես տեսանք, նախորդող հայ պատմիչների մոտ այլ տվյալներ կան։ Արաբ խալիֆաների իշխանության տարիների մասին նման ցուցակներ կարելի է կազմել նաև հույն և ասորի պատմիչների տվյալներով։ Դուրս բերելով IX դարի սկզբի բյուզանդացի պատմիչ Թեոփանեսի տեղեկություններն այդ մասին[45], ստանում ենք մի ցուցակ, որի թվերի հետ բավական նմանություն ունեն «այլ պատմագրի» տվյալները։

	Ղևոնդ	այլ պատմագիր	Թեոփանես
Աբու Բաքր		60	2,5
Ամր (Օմար)	38 տարի	11	12
Օթման		10	10
Մուավիա	19 տ. 4 ամիս	23	24
Եզիդ	2 տ. 5 ամիս	6	3
Մաւիա իբն Եզիդ		1	
Մրուան		1	1
Աբդլմելիք	21	20	22 (21,5)
Վալիթ	10 տ. 8 ամիս	9	9

Աղյուսակում այլ պատմագրի տվյալները ավելի մոտ են Թեոփանեսին, քան Ղևոնդին։ Սա մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ գուցե Ստեփանոս Տարոնեցին ծանոթ է եղել բյուզանդական հայտնի պատմիչի ժամանա-

---

44 Ասողիկի Բ գրքի Ե գլխի հարպատությունը վիճելի հարց է եղել անցյալում։ Կարապետ վարդապետ Շահնազարյանցը էջմիածնի մի ձեռագրի հիման վրա կատարած իր հրատարակության մեջ չունի այս գլուխը և նախորդ գլխի մի մասը, թեև Բ գրքի գլխացանկում հիշվում է Ե գլուխը («Յայլմէ օրինակէ յաղագս ամիր ալ-Մումնեացն Տաճկաց և երկանուն սկզբանց», «Ասողկայ Պատմութիւն տիեզերական», Փարիզ, 1859, էջ 59)։ Մի քանի տարի հետո լույս տեսած ռուսերեն թարգմանության առաջաբանում Մ. Էմինը գրում է, թե Բ գրքի Ե գլուխը, որի վերնագիրը հիշված է Կ. Շահնազարյանցի հրատարակության մեջ և ամբողջությունը կա Բրոսեի ու Մխիթարյանների ձեռագրերում, անհարազատ է։ Այսուհանդերձ իր հրատարակության հավելվածների մեջ տվել է Ե գլխի հայերեն բնագիրը և ռուսերեն թարգմանությունը («Всеобщая история Степаноса Таронского Асохика», пер. Н. Эмин, М., 1864, էջ X—XI, 324, 330)։ Է. Դյուլորիեն ֆրանսերեն թարգմանության մեջ տվել է նաև այս գլուխը, ծանոթագրությունների մեջ շեշտելով, որ սա հարազատ է Ասողիկի բնագրին (Histoire Universelle par Etienne de Daron, trad. par E. Dulaurier, Paris, 1883, էջ 204)։ Նույնը կրկնում է նաև Ս. Մալխասյանցը իր հայերեն հրատարակության մեջ (Ասողիկ, էջ 371—374)։

45 Թեոփանես Խոստովանող, թարգմ. Հ. Բարթիկյանի (ձեռագիր), էջ 50, 57, 61, 76, 77, 93։

կագրությանը[46]։ Այս առթիվ կուզենայինք նշել, որ արդարացի չէ այն իշխող կարծիքը, թե նա իր առաջին երկու հատորների նյութը սոսկ ընդօրինակել է նախորդ պատմիչներից։ Համենայն դեպս վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ նա պրպտումներ է կատարել ճշտելու համար այլ պատմիչների տված ժամանակագրական տվյալները։

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը արժանի է ավելի պատվավոր տեղ գրավելու հայ պատմագրության մեջ, քան ունեցել է մինչև այժմ։ Եթե Մովսես Խորենացին առաջին պատմիչն է, որ տվել է Հայոց պատմության ժամանակագրությունը (ըստ թագավորների իշխանության տարիների), ապա Ստեփանոս Տարոնեցին առաջինն է, որ տալիս է Հայոց պատմության թվակիր ժամանակագրությունը, թեկուզ միայն չորս դարի (VII—X դդ.) համար (քանի որ հիմք էր ընդունել միայն հայկական թվականը)։ Առանց թվականի օգտագործման պատմությունը զուրկ է ճշգրտությունից։ Ստեփանոս Տարոնեցին հայ պատմագրությունը բարձրացրեց նոր աստիճանի, հնարավորություն տալով հետագա հայ պատմիչներին առավել ճշգրիտ ձևով նկարագրելու պատմական իրադարձությունները։ Նրա թվականներից շատերն այժմ ընդունված են հայ պատմագրության մեջ։

Ստեփանոս Ասողիկից հետո թվակիր ժամանակագրության համակարգը ավելի զարգացավ։ Սամուել Անեցին արդեն օգտագործում է փրկչական թվականը (մեր թվականությունը), որի շնորհիվ կարողանում է թվագրել նաև մեր թվականության սկզբից մինչև VII դարն ընկած դեպքերը։ Դրանից հետո հաճախ զուգահեռ օգտագործում է հայկական և փրկչական թվականները[47]։ Իսկ մեր թվականությունից առաջ (նախքան Քրիստոս) ընկած ժամանակաշրջանի համար գործածում է արարչության յոթանասնից (Եվսեբիոսի) թվականը 5198 տարվա շրջանով։ Այդ նույն ձևով շարադրում է Հայոց պատմությունը նաև Մխիթար Այրիվանեցին[48] և շատ այլ պատմիչներ։

Նոր դարերում հայ պատմագրության հիմնադիր Միքայել Չամչյանը այս նույն ձևով է հաշվում ժամանակագրությունը։ «Ի սկզբանէ ի Քրիստոս»[49] շրջանն ընդունելով 5198 տարի (յոթանասնից թվականը), նա հաշվում է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից։ Օրինակ՝ հայ ժողովրդի նախահայր Հայկ նահապետը Բելի դեմ ապստամբեց 2853 թ. (5198—2853=2345 մեր թվականությունից առաջ) և եկավ իր գերդաստանով հաստատվեց «ի կողմն հիւսիսոյ յերկիրն Արարատայ»[50]։

Հայ նոր պատմագրությունը (XIX դարում և մեր օրերում) թեև այլևս չառաջնորդվեց հայկական թվականությամբ, պատմության ժամանակագրությունը կատարելով մեր (փրկչական) թվականությամբ, սակայն նրա հիմքում ընկած են Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի և նրան հաջորդող պատմիչ-

---

46 Այս ծանոթությունը երևում է նաև այն բանից, որ «այլ պատմագրի» ցուցակում Օսման խալիֆան հիշվում է հայրանունով՝ իպն Ափան (Թեոփանեսի մոտ՝ «Ֆանի որդի»), մինչդեռ VII—X դդ. հայ պատմիչներից ոչ մեկը չի հիշում նրա հայրանունը։

47 «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893։

48 «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860։

49 Ե՛. Չամչեանց, Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն, հատ. Ա, Վենետիկ, 1784, էջ 8։

50 Նույն տեղում, էջ 62։

ների (Սամուել Անեցի, Մատթեոս Ուռհայեցի, Միխիթար Այրիվանեցի, Սմբատ պատմիչ, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օրբելյան, Վարդան և ուրիշներ)[51] *հաղորդած թվակիր ժամանակագրության տվյալները*[52]։

ХРОНОЛОГИЯ С ЛЕТОСЧИСЛЕНИЕМ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Доктор историч. наук А. Н. ТЕР-ГЕВОНДЯН

(Резюме)

Хотя историография в Армении еще в V в. достигла высокой степени развития, однако до VII в. армянские историки не употребляли летосчисления и связывали исторические события с годами правления того или иного лица. Основой хронологии в исторических сочинениях стало «великое армянское летосчисление», принятое в 584 г., которое вело свое начало с 552 г. Однако историк VII в. Себеос не прибегает к «армянскому летосчислению», и даже последующие авторы — Анания Ширакаци (вторая половина VII в.), Иоанн Одзнеци (VIII в.), Гевонд (VIII в.), Товма Арцруни (начало X в.), Иоанн Драсханакертци (начало X в.) — употребляют его только эпизодически.

Первый армянский автор, который систематически употреблял летосчисление, это историк конца X — начала XI вв. Степанос Таронеци (Асолик). Хронология событий в Армении до VI в. н. э. у Асолика еще связывается с годами правителей, но хронологию четырех веков, с VII по X, он излагает с помощью армянского летосчисления.

---

51 «Մ՛անր ժամանակագրություններ XIII—XVIII դարերի», կազմեց Վ. Հակոբյան, հատ. Ա, Երևան, 1951, էջ 22—26, 35—50, 74—87. հատ. Բ, Երևան, 1956, էջ 3—27, 118—151։

52 E. Dulaurier, Recherches sur la chronologie armenienne, Paris, 1859.